ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Սիմոնյան Ջոն Տիգրանի «Մեղուների վարակիչ հիվանդությունների ուսումնասիրումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով՝ Ժ2.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության ավանդական ճյուղերից մեկը: Այն զարգացած է եղել դեռ հին Հայաստանում, որտեղ մեղրը օգտագործվել է ոչ միայն որպես սննդամթերք, այլ նաև որպես դեղամիջոց տարբեր հիվանդությունների բուժման և կանխարգելման համար, ինչի մասին վկայում են Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում պահվող հայկական և օտարազգի գիտական աշխատանքները:

Անգնահատելի է մեղվաբուծության դերը գյուղատնտեսական մթերքների բերքատվության գործում: Հենց մեղուներն են իրականացնում բույսերի փոշոտումը՝ բարձրացնելով բերքատվությունը և օգնելով պահպանել բնական կենսաբազմազանությունը: Սակայն ամբողջ աշխարհում շրջակա միջավայրի գլոբալ վատացման հետ կապված՝ ագրոքիմիական միջամտությունների, կլիմայի փոփոխությունների, զանազան հիվանդությունների առկայությունը լուրջ մարտահրավերներ են մեղվաբուծության զարգացման և կայունության համար:

Ցավոք, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ՀՀ-ում մեղուների վարակիչ հիվանդությունների նկատմամբ գիտական աշխատանքներ գրեթե չեն կատարվում: Պարզ չէ մեղուներն ինչ հիվադնություններ և ինչպիսի տարածվածություն ունեն, որոնք են նրանց առաջացման պատճառներն ու նպաստող գործոնները:

Հաշվի առնելով վերոնշյալը Ջոն Սիմոնյանը նպատակադրվել է լրացնել այդ բացը և ՀՀ-ում կատարել մեղուների վարակիչ հիվանդությունների հետազոտություններ:

Աշխատանքի իրականացման շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրներ.

1. կատարել մարզային այցելություններ՝ դեպքերի հիման վրա, իրականացնել տարբեր վարակիչ հիվանդությունների հայտնաբերմանն ուղղված աշխատանքներ, հավաքագրել համապատասխան ախտաբանական նմուշներ.

2. կատարել լաբորատոր հետազոտություններ և համաճարակաբանական վերլուծություն.

3. ուսումնասիրել մեղուների որոշ վիրուսային հիվանդությունների առկայությունը Հայաստանի Հանրապետությունում.

4. հետազոտել մեղուների բակտերիալ հիվանդությունները.

5. պարզել մեղուների անկման հետևանքով առաջացած տնտեսական վնասները.

6. կատարել քարտեզագրում աշխատանքներ:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ ՊՇՌ մեթոդով հայտնաբերվել են մեղուների վեց վիրուսային հիվանդությունների հարուցիչներ՝ պարկաձև թրթուրի վիրուս, սուր և քրոնիկ վիրուսային կաթվածներ, մեղուների թևերի ձևափոխման վիրուս, Բիգ Սու գետի վիրուս և Սինայ լճի վիրուս-2: Իրականացվել է նաև մեղուների վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական վերլուծություն, քարտեզագրում և առաջացած տնտեսական վնասի գնահատում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են՝

- 2019-2023 թվականների ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում մեղուների վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակի ուսումնասիրություն.
- մեղուների անկումների անապահով կետերի (տարածքների) քարտեզագրում.
- հիվանդությունների հետևանքով առաջացած տնտեսական վնաս:

Պաշտպանությանը ներկայացված ատենախոսությունը չափազանց արդիական է, քանի որ այն հանդիսանում է վերջին մի քանի տասնամյակների ընթացքում կատարված համապարփակ և եզակի աշխատանք, որտեղ հեղինակը բացահայտել է ՀՀ-ի մի շարք մարզերում մեղուների անկման պատճառները, կատարել անապահով կետերի քարտեզագրում, համաճարակաբանական վերլուծություններ, ինչպես նաև գնահատել է մեղուների հիվանդությունների հետևանքով առաջացած տնտեսական վնասը: Ատենախոսության խնդիրները տրամաբանորեն բխում են ստանձնած նպատակից, ձևակերպված են հստակ և գրագետ:

Ատենախոսության կառուցվածքը լիովին համապատասխանում է գիտական պահանջներին: Այն բաղկացած է 123 տպագիր էջից՝ ներառյալ 15 աղյուսակ, 5 գծապատկեր, 7 նկար և 1 քարտեզ, որոնք նպաստում են գիտական աշխատության մատչելիությանը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, գրականության տեսությունից, նյութեր և մեթոդներից, սեփական հետազոտություններից, հետազոտությունների արդյունքների ամփոփումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և 4 հավելվածներից՝ 49 էջ: Գրականության ցանկն ընդգրկում է հայ և օտարազգի հեղինակների աշխատանքների 136 աղբյուր և 5 կայքէջի հղում, ինչը վկայում է թեմայի շուրջ հեղինակի միջազգային գիտական տվյալների լայնածավալ ուսումնասիրությանը:

Հեղինակի կողմից կատարված հետազոտությունների արդյունքները զեկուցվել և քննարկվել են՝ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ գիտական խորհրդի 2022 և 2023 թվականների նիստերին, Դաշտային համաճարակաբանության վերապատրաստման ծրագրի միջանկյալ աշխատաժողովում և 2023 թվականին կայացած «Մեղվաբուծության համայակական ֆորումում»: Հրատարակվել է 4 հոդված, որից 3-ը Հայաստանի Հանրապետության գիտական ամսագրում, իսկ 1-ը՝ միջազգային ամսագրում:

Քննարկվող ատենախոսության արդյունքներն ունեն կարևոր գործնական նշանակություն, քանի որ ՀՀ-ի որոշ բնակավայրերում բացահայտվել են մեղուների վարակիչ հիվանդություններ, որոնց դեմ պայքարի և կանխարգելման նպատակով հեղինակի կողմից մշակվել է կարգ, կատարվել է համաճարակաբանական վերահսկողության համակարգի գնահատում, ինչպես նաև նշվել են բազմաթիվ այլ խնդիրներ:

Ատենախոսության ուսումնասիրությունն ընդգրկում է 2019-2023 թվականները: Նմուշառումն իրականացվել է ՀՀ-ի 6 մարզերի 884 կասկածվող մեղվաընտանիքներից: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ախտահարված են եղել ուսումնասիրված մեղվաընտանիքների 74,2%-ը: Առաջին հայացքից վարակվածության աստիճանը մեծ է, սակայն դա բացատրվում է նրանով, որ ուսումնասիրվել են արդեն իսկ կասկածվող մեղվաընտանիքներ: Վիրուսային հարուցիչներով ախտահարված են եղել 560 մեղվաընտանիք՝ ընդհանուր ախտահարված մեղվաընտանիքների 85,4%-ը:

Ատենախոսության հեղինակն աղյուսակների, քարտեզների և գծապատկերների միջոցով մատչելի ներկայացրել է մեղուների ախտահարումների քանակն ու տեղակայությունը: Բացի այդ նա իրականացրել է վիճակագրական տվյալների մաթեմատիկական մշակում, ինչն աշխատանքին հաղորդում է գիտական հավաստիություն: Սույն ատենախոսության արդյունքները կարող են հաջողությամբ օգտագործել արտադրությունում աշխատող մասնագետները, քանի որ նրանց տրամադրվում է բավականին արժեքավոր տվյալներ մեղուների վարակիչ հիվանդությունների վերաբերյալ: Կարծում եմ ստուգված արդյուքերը կայուն հիմք են հանդիսանում հետագա հետազոտողների համար և ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մեծ արժեք:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են 5 կետից բաղկացած եզրակացություններում, որոնք տրամաբանորեն բխում են աշխատանքի բովանդակությունից և արտացոլում են ստացված տվյալները:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին, իսկ ատենախոսության հիմնադրույթները լիովին արտացոլված են չորս հրապարակումներում:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով աշխատանքը նպատակահարմար եմ գտնում ներկայացնել որոշ դիտողություններ և առաջարկություններ, որոնք որևէ կերպ չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը՝

1. մեղվաբուծության նպատակը մեղր ստանալն է, որի վերաբերյալ ոչինչ չի ասվում.
2. ցանկալի կլիներ վայրի մեղուների նկատմամբ ևս իրականացնել վարակիչ հիվանդությունների հետազոտություններ.
3. ցանկալի կլիներ ավելի մանրամասն հետազոտություններ կատարել հիվանդություններ փոխանցողների շրջանում.

Այսպիսով Ջոն Սիմոնյանի «Մեղուների վարակիչ հիվանդությունների ուսումնասիրումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ամբողջական, գիտականորեն հիմնավորված աշխատանք է, որը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Ջոն Տիգրանի Սիմոնյանը, արժանի է ԺՋ.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդիմախոս՝
անասնաբուժական գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Վ. Վ. Աբրահամյան

Անասնաբուժական գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Վ. Վ. Աբրահամյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀԱԱՀ գիտ. քարտուղար, գյուղ. գիտ. թեկնածու, docent՝ Գ. Ա. Ավագյան